ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ *

ՀՏԴ 323.2 *DOI: 10.52063/25792652-2025.1.24-114*

ԱՆԱՀԻՏ ՇԱՀՈՒՄՅԱՆ

ՀՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ,
Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի քաղաքական հետազոտությունների բաժնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
anahit.shahumyan@isec.am
ORCID: 0009-0009-5319-1270

Սույն գիտական հոդվածի նպատակն է բացահայտել քաղաքացիական վերահսկողության դրսևորման առանձնահատկություններն ու ձևերը պետության անվտանգության իրացման գործընթացում:

Վերոնշյալ նպատակներին հետամուտ՝ տվյալ գիտական հոդվածում ներկայացված հետազոտության շրջանակներում հեղինակն իր առջև խնդիր է դրել ուսումնասիրելու ժողովրդավարական վերահսկողության, ինչպես նաև պառլամենտական վերահսկողության իրացման ուղիները, դրանց պատմական ձևավորման հարցերը: Ավելին՝ հեղինակը ներկայացրել է պետության օրենսդիր մարմնի՝ խորհրդարանի (ՀՀ Ազգային ժողովի) վերահսկողական գործառույթները, որոնք իրենց ուրույն ազդեցությունն են թողնում պետության անվտանգության կայացման և զարգացման գործում:

Սույն հետազոտության մեթոդաբանական հիմք են կազմում ինչպես ընդհանուր, այնպես էլ իրավագիտական ուսումնասիրությունների հատուկ մեթոդները, որոնցից են՝ պատմական, ձևական-իրավական և իրավահամեմատական մեթոդները:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարող ենք եզրահանգել, որ պետության անվտանգության նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն օժտված է ձևավորման և զարգացման բարդ պատմական ակունքներով: Ավելին՝ քաղաքացիական վերահսկողության արդյունավետությունը ցայտուն կերպով իրականացվում է ոչ պետական կազմակերպությունների կողմից՝ արդիական թողնելով այն հարցը, թե ում կողմից և ինչ նպատակներով են ֆինանսավորվում դրանք: Միևնույն ժամանակ շարունակում են արդիական մնալ Հայաստանի Հանրապետությունում իրավաքաղաքական բարեփոխումները՝ ուղղված ոլորտում առկա խնդիրների լուծմանը:

Հիմնաբառեր՝ *քաղաքացիական վերահսկողություն, պետություն, անվտանգություն, խորհրդարան, միջազգային կազմակերպություններ, ոչ կառավարական կազմակերպություններ, մարդու իրավունքներ, քաղաքացիական հասարակություն:*

---

* Հոդվածը ներկայացվել է 05.02.2025թ., գրախոսվել՝ 20.02.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2025թ.:

Նախաբան

Ցանկացած պետության առաջնահերթ խնդիրներից է ազգային անվտանգության ապահովումը: Եթե պետությունը անվտանգության ապահովման հարցում խնդիրների առջև է կանգնում, ապա բավականին բարդ է, երբեմն նաև անհնար՝ այլ բնագավառներում զարգացումներ երաշխավորել: Ցավոք, Հայաստանի Հանրապետության օրինակով պարզ դարձավ, թե ազգային անվտանգության ապահովումը որքան կարևոր է, իսկ խաթարումը ինչ ծանր հետևանքներ կարող է ունենալ պետության համար: Եվ այստեղ հարցեր են առաջանում՝ արդյո՞ք միայն պետությունն է իրավասու ապահովելու ազգային անվտանգությունը, կա՞ որևէ մեխանիզմ, որով հասարակությունը հնարավորություն կունենա վերահսկելու, թե ինչպես է իրականացվում ազգային անվտանգության երաշխավորումը:

Առաջադրված խնդրի համատեքստում հիմքային է վերլուծել և գնահատել, թե ինչ է նշանակում քաղաքացիական վերահսկողությունը, ինչ մեթոդներով է իրականացվում և ապա՝ ինչ դեր ունի անվտանգության համակարգի ապահովման գործընթացում:

Վերահսկողության էությունն ու ընդհանուր բնութագիրը

Ընդհանուր առմամբ՝ վերահսկողությունը կառավարման ամենակարևոր գործառույթներից է, որը հնարավորություն է ընձեռում բացահայտելու շեղումները, սխալներն ու թերությունները, փնտրելու նոր ռեսուրսներ, հնարավորություններ (առանց որոնց անհնար է գործնականապես արդյունավետորեն իրականացնել կառավարման մյուս երեք ընդհանուր գործառույթները՝ պլանավորումը, կազմակերպումը և մոտիվացիան) (Արշակյան 200-201):

Որքան բաց է պետության ղեկավար կառույցների և պաշտոնավարող անձանց գործունեությունը հասարակության առջև, այնքան փոքր է նրանց հնարավորությունները՝ չարաշահելու իրենց տրված լիազորությունները:

Վերահսկողության դերն ու կարևորությունը ակնհայտ է, բայց այն ավելի մեծ նշանակություն է ստանում, երբ կիրարկվում է որպես «քաղաքացիական վերահսկողության» ձևաչափ: Որպես այդպիսին՝ «քաղաքացիական վերահսկողությունը» իրականացվում է «քաղաքացիական հասարակության» կողմից:

Լայն (փիլիսոփայական) իմաստով քաղաքացիական հասարակությունը հանրային կյանքի կազմակերպման ու կառավարման այնպիսի եղանակ է, որտեղ կենտրոնական արժեքը, հիմնական գործող սուբյեկտը և վերջնական նպատակը մարդ-քաղաքացին է՝ իր շահերով, պահանջմունքներով ու իրավունքներով:

Նեղ իմաստով, կարևորելով հանրային կյանքի կազմակերպման և կառավարման գործընթացներում ոչ կառավարական կազմակերպությունների դերը, «քաղաքացիական հասարակություն» հասկացության տակ հասկանում են երրորդ սեկտորը՝ ոչ կառավարական, ոչ առևտրային կազմակերպությունները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, ստեղծագործական միավորումները, բարեգործական կազմակերպությունները, քաղաքացիական շարժումներն ու ակտիվության ձևերը (Հ. Հովհաննիսյան 17):

Պաշտոնական կառավարչական գործընթացի դիտանկյունից քաղաքացիական վերահսկողությունը պետական, համայնքային և այլ մարմինների, ինչպես նաև պաշտոնավարող անձանց գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողությունն է, օրինականության և այդ գործունեության արդյունավետության գնահատականը: Այս ձևաչափում նույնպես քաղաքացիական վերահսկողությունը քաղաքացիական հասարակության հիմնական գործառույթներից է (Williams 2021):

Յուրաքանչյուր ժողովրդավարական պետությունում պետական մարմինները ձգտում են հանրային կառավարումն իրականացնել հնարավորինս բաց և թափանցիկ կերպով: Այդ ձգտումը պայմանավորված է մի կողմից՝ պետության քաղաքացիների

պահանջատիրությամբ, մյուս կողմից՝ հանրային կառավարման համակարգի նկատմամբ քաղաքացիների վստահությունը և աջակցությունն ունենալու անհրաժեշտության գիտակցմամբ: Այս երկու գործոնները նկատի ունենալով՝ հանրային կառավարման տեսությունը ներկայումս առաջնային է համարում թափանցիկության և անվտանգության համակարգում հաշվետու լինելու սկզբունքների ամրագրումն ու լայն կիրառությունը (Cole 14-15):

Թափանցիկություն ասելով՝ ընդունված է հասկանալ մի իրավիճակ, երբ քաղաքացին, հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ կարող են իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալ անմիջապես այն տնօրինող պետական մարմնից՝ առանց որևէ այլ միջոցի դիմելու (Վ. Հովհաննիսյան 336):

Դա շատ կարևոր է հանրային կառավարման, այդ թվում նաև՝ անվտանգության ոլորտի կառավարման, արդյունավետության ապահովման համար:

Փորձը ցույց է տալիս, որ հասարակության անվստահությունը հիմնականում ձևավորվում է տեղեկատվության բացակայության պայմաններում: Որոշ դեպքերի վերաբերյալ ստանալով կցկտուր տեղեկություններ՝ քաղաքացիները սկսում են յուրովի դատողություններ անել, որոնք միշտ չէ, որ համապատասխանում են իրականությանը: Իրավիճակն ավելի է բարդանում, երբ որոշ ՁԼՄ-ներ, օգտվելով պաշտոնական տեղեկատվություն չլինելու հանգամանքից, փորձում են սենսացիոն բնույթի նյութեր «հայթայթել» և, առանց պատշաճ մասնագիտական վերլուծության ենթարկելու, հրապարակել՝ նպատակ ունենալով բարձրացնելու իրենց վարկանիշը: Հասարակությունն էլ իր հերթին ցանկանում է լիովին իրազեկված լինել այն ամենի մասին, ինչ կատարվում է երկրում:

Նշված համատեքստում ընդգծվում է, որ քաղաքացիական վերահսկողությունը փաստացի քաղաքացիական հասարակության ամենակարևոր գործառույթներից է, որը նաև արտահայտում է այն, թե կոնկրետ պետությունը որքանով է ժողովրդավարական:

Քաղաքացիական վերահսկողության ինստիտուցիոնալ ուսումնասիրման շրջանակներում կարևոր է նաև քաղաքացիական վերահսկողության սուբյեկտների հստակեցումը: Քաղաքացիական վերահսկողության սուբյեկտ են հանդիսանում քաղաքացիների կազմակերպված խմբերը, նախաձեռնող քաղաքացիները, հասարակության ներկայացուցիչները, ոչ կառավարական կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև մի շարք մասնագիտական-փորձագիտական շրջանակներում դրանց շարքին են դասվում որոշակի իշխանական առնչակցություն ունեցող ինստիտուտները (մարդու իրավունքների պաշտպանը, որոշ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, գերատես-չությունների ղեկավարներին առընթեր հասարակական հաստատությունները, պալատները, խորհուրդները և այլն) (Пишулин 108):

Ոչ կառավարական կազմակերպությունները և ինստիտուտները կարող են մասնակցել անվտանգության ոլորտում քաղաքականության մշակման գործընթացին, ինչպես նաև վերահսկողություն իրականացնել քաղաքականությունն իրագործող պետական մարմինների գործունեության նկատմամբ:

Ոչ կառավարական կազմակերպությունների հետաքրքրության ոլորտը կարող են լինել ինչպես աշխարհագրական (տարածքային)՝ հասարակական խմբեր, որոնք ուսումնասիրում են տեղանքում իրավապահ, տարածքային կառավարման մարմինների գործունեությունը կամ ռազմական կառույցների ազդեցությունը մոտակա բնակավայրերի վրա, խմբային (կոլեկտիվ), որոնք պաշտպանում են էթնիկ, ռասայական, հավատքի, սեռական փոքրամասնությունների իրավունքները, այնպես էլ կարող են կրել առարկայական բնույթ՝ էկոլոգիական խմբեր, խաղաղության պահպանման համար պայքարողների խմբեր, որոնք պաշտպանում են մարդու իրավունքները տարբեր ոլորտներում:

Գործադիր իշխանության մակարդակում ոչ կառավարական կազմակերպությունները պատասխանատու կազմակերպությունների հետ համագործակցում են ավելի շատ, քան՝ հատուկ ծառայությունների: Որպես ոչ կառավարական կազմակերպությունների կողմից գործադիր իշխանության գործառնական ազդեցության ու ներգրավվածության օրինակ կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական միջոցառումները.

- հետազոտությունների իրականացում, տեղեկատվության հավաքում, այլ երկրներից համեմատական տվյալների հավաքագրում, տեսական մոդելների մշակում և ներկայացում իրավասու կառույցներին,
- կոնկրետ հիմնախնդիրներով հաշվետվությունների նախապատրաստում՝ ձևավորվող քաղաքական ուղղվածությանը ազդելու կամ որոշակիորեն օժանդակելու նպատակով,
- ընդհանուր և առարկայական համագործակցություն զանգվածային լրատվամիջոցների հետ,
- փորձագետների գործուղում պետական հաստատություններ և անվտանգության ոլորտի այլ կառույցներ,
- մարդու իրավունքների պաշտպանության, անվտանգության վերահսկողական և նմանատիպ այլ թեմաներով վերապատրաստման դասընթացների, ծրագրերի կազմակերպում (Johnson 15-16):

Ոչ կառավարական մեխանիզմներից զատ՝ քաղաքացիական վերահսկողության ապահովման կարևոր օղակներից է նաև մարդու իրավունքների պաշտպանի կամ օմբուդսմենի ինստիտուտը: Տվյալ ինստիտուտը տարբեր երկրներում կրում է տարբեր անվանումներ, օրինակ՝ սկանդինավյան պետություններում այն կոչվում է «օմբուդսմեն», Իսպանիայում և Կոլումբիայում՝ «ազգային պաշտպան», Ֆրանսիայում՝ «միջնորդ», և այլն (Núria 20): Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը վաղուց իր ուրույն տեղն ունի կայուն ժողովրդավարությամբ մի շարք երկրների իրավական համակարգերում: Ուշագրավ է մարդու իրավունքների պաշտպանի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ ներկայացված սահմանումը: Այսպես՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի մասին սահմանադրական օրենքի 1-ին հոդվածը սահմանում է. «Պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ սույն օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը» (Մարդու իրավունքների պաշտպանի մասին ՀՀ սահմանադրական օրենքը):

Որոշ երկրներ, զարգացնելով մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի գաղափարը, ստեղծել են մասնագիտացված հաստատություններ՝ **երեխաների իրավունքների պաշտպան**, **զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպան** և այլն:

Անվտանգության համակարգի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնող սուբյեկտներից կարևոր դեր ունեն նաև գիտահետազոտական ինստիտուտները, գիտակրթական հաստատությունները և փորձագիտական կենտրոնները, որոնք վերլուծություններ կարող են կատարել տվյալ պետության վարած քաղաքական կուրսի վերաբերյալ:

Քաղաքացիական վերահսկողությունը կարող է իրականացվել յուրաքանչյուր բնագավառում: Այն իրականացվում է քաղաքացիների հիմնարար իրավունքներն ու ազատությունները պահպանող պետության՝ օրինական, հավասարակշռված կառավարումը ապահովելու նպատակով: Ժողովրդավարական պետություն ունենալու առաջնահերթ խնդիրներից է ապահովել կառավարության և քաղաքացիական

հասարակության արդյունավետ համագործակցությունը: Պետությունը պետք է բաց լինի քաղաքացիական վերահսկողություն իրականացնող սուբյեկտների համար և աջակցի պետության ղեկավար մարմինների լիազորությունների սահմաններում իրականացվող գործողությունները թափանցիկ և վերահսկելի դարձնելու գործընթացին:

Այս ամենը շատ լավ է հնչում, սակայն առաջնային է գնահատել՝ որքանով է նպաստավոր պետության համար անվտանգության ոլորտում իրականացվող վերահսկողությունը, արդյո՞ք այս ոլորտում թափանցիկությունը չի վնասի պետության ազգային անվտանգության ապահովման գործընթացի խթանմանը:

Ժողովրդավարական պետությունը պարտավոր է ապահովել անվտանգություն, որն արդյունավետ է, թափանցիկ և հաշվետու՝ իր քաղաքացիներին: Հետևաբար՝ պետությունը անվտանգության ապահովման տեսանկյունից ամենալեգիտիմն է՝ բազմաթիվ հանրային կառույցների համեմատությամբ: Բացի այդ, քաղաքացիական վերահսկողությունը անվտանգության համակարգի նկատմամբ ժողովրդավարական երկրներում մեծացնում է նաև քաղաքացիների մասնակցությունը քաղաքական կյանքին (Cole 15):

21-րդ դարում քաղաքացիական վերահսկողությունը ժողովրդավարության հաստատման ամենաէական տարրերից է, հետևաբար կարևոր է գնահատել, թե ինչպես է հնարավոր իրականացնել այդ վերահսկողությունը անվտանգության ոլորտի նկատմամբ՝ պահպանելով ժողովրդավարական պետություններում այդ ոլորտի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անհրաժեշտությունը և փորձելով, այնուամենայնիվ, խոցելի չդարձնել այդ ոլորտը: Քաղաքացիական վերահսկողությունը, հատկապես պետության անվտանգության ապահովման գործընթացում առաջնային է, քանի որ այդ ոլորտում պետության կայացրած որոշումները անմիջականորեն սպառնում են քաղաքացիների շահերին:

Ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողությունը անվտանգային ուժերի նկատմամբ ներառում է գործընթացների շարք, մասնավորապես՝

- քաղաքացիական հասարակության վերահսկողությունը՝ անվտանգության ոլորտում որոշումների կայացման ժամանակ,
- խորհրդարանի վերահսկողությունը՝ պաշտպանական-անվտանգային քաղաքականության նկատմամբ,
- դատական վերահսկողությունը՝ հատկապես ուժայինների կողմից օրենքները հետևելու նկատմամբ,
- քաղաքացիական վերահսկողությունը ոչ կառավարական կազմակերպությունների, ՁԼՄ-ների, արհմիությունների կողմից:

Բազմաթիվ քաղաքագետներ, վերլուծաբաններ իրենց աշխատություններում անդրադարձել են քաղաքացիական վերահսկողության դերի կարևորությանը դեպի ժողովրդավարություն տանող պետության կայացման բարդ ճանապարհին: Նրանց աշխատություններում և վերլուծություններում խոսվում է քաղաքացիական վերահսկողության ընդգծված կարևոր դերի մասին՝ հատկապես ռազմական ոլորտում:

Բավական հատկանշական վերլուծություն կարելի է գտնել ամերիկացի հայտնի քաղաքագետ Սամուել Հանթինգտոնի «Զինվորը և պետությունը» աշխատության մեջ, որտեղ քաղաքացիական վերահսկողությանը տրվում է հստակ սահմանում: Ըստ Հանթինգտոնի՝ քաղաքացիական վերահսկողությունը մասնագիտացված իրավասու զինված ուժերի պատշաճ ենթակայությունն է քաղաքացիական հասարակության կողմից սահմանված քաղաքականությանը (Huntington 72-73):

Հանթինգտոնի սահմանումը՝ քաղաքացիական վերահսկողության վերաբերյալ, տեսականորեն ամբողջովին պարզ է, սակայն գործառնական տեսանկյունից եթե դիտարկենք, ապա պետության ռազմական ոլորտը բավականին պրոֆեսիոնալ և ճկուն պետք է լինի, որպեսզի, անկախ պետության վարած քաղաքականությունից,

կարողանա ենթարկվել քաղաքացիական վերահսկողության՝ միաժամանակ խոցելի չդարձնելով այդ ոլորտը:

Կարևորելով քաղաքացիական վերահսկողության սուբյեկտ հանդիսացող կառավարական կազմակերպությունների դերը՝ այնուամենայնիվ, հարկ ենք համարում ընդգծել խորհրդարանի կարևորագույն դերը ժողովրդավարության հաստատման գործընթացում: Ժողովրդավարական երկրներում պատգամավորները, ժողովրդից ստանձնելով անմիջական մանդատ, հավասարակշռության, զսպումների և վերահսկողության կառուցակարգերի միջոցով փորձում են հակակշռել գործադիր իշխանությանը (Комарова 18-20):

Հայտնի է, որ խորհրդարանի պատգամավորների լիազորությունների շրջանակը էականորեն ընդլայնված է խորհրդարանական կառավարման ձև ունեցող պետություններում (Հայաստանի Հանրապետություն, Լեհաստանի Հանրապետություն, Լիտվայի Հանրապետություն և այլն): Մասնավորապես, խորհրդարանական կառավարման ձևում առանձնահատուկ նշանակություն և կարևորություն են ստանում պետության կառավարության գործունեության կայունությունը, խորհրդարանի վերահսկողական լիազորությունների շրջանակի ընդլայնումը, ազգային փոքրամասնությունների դերը, հանրապետության վարչապետի լիազորությունների շրջանակի ընդլայնումն ու երկրի նախագահի ներքին և արտաքին քաղաքականությունում իրավասությունների սահմանափակումը: Ավելին՝ տվյալ կառավարման մոդելում, Կառավարությունը՝ վարչապետի գլխավորությամբ, պատասխանատու է խորհրդարանի առջև, ինչը հնարավորություն է ընձեռում խորհրդարանին վերահսկողություն իրականացնելու գործադիր իշխանության նկատմամբ՝ ներառյալ անվտանգության ոլորտում:

Անվտանգության համակարգի նկատմամբ արդյունավետ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար ամուր հիմք են հետևյալ լիազորությունները, որոնցով օժտված է խորհրդարանը՝ որպես իշխանություն.

- խորհրդարանը ընդունում է օրենքներ, որոնք հստակ սահմանում են գործադիր իշխանության լիազորությունները, սահմանվում է բյուջեի չափը պետական այն սուբյեկտների համար, որոնք պատասխանատու են ուժի կիրառման համար՝ ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական կառավարման համակարգերի նկատմամբ.
- բացի այն, որ խորհրդարանը պատերազմ և ռազմական դրություն է հայտարարում, այն սահմանում է նաև այդ իրավիճակի ժամանակահատվածի տևողությունը.
- խորհրդարանը օրենքով սահմանում է, թե որ պետական մարմինն է լիազորված որոշում կայացնելու զինվորական և քաղաքացիական ուժերը արտերկիր ուղարկել՝ խաղաղության պահպանման գործողություններին մասնակցելու նպատակով, կամ թույլտվություն տալու՝ օտարերկրյա պետությունների զինված ուժերը ազգային պետության տարածքում տեղակայելու համար (Peters 14-15):

ՀՀ Ազգային ժողովը՝ որպես ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցչական մարմին, երկրում իրականացնում է օրենսդիր իշխանություն, վերահսկողության սահմանում կառավարության գործունեության նկատմամբ (Ազգային ժողովը գործադիր իշխանության նկատմամբ ունի վերահսկողական լուրջ և գործուն լծակներ): Այն վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի ընդունման ու կատարման (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն) կառավարության և գործադիր իշխանության պաշտոնատար անձանց աշխատանքի, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառույթների և վարկերի օգտագործման նկատմամբ:

Ինչպես հասկացանք, խորհրդարանի դերը անվտանգության ոլորտի թափանցիկության և արդյունավետության հարցում չափազանց մեծ է, սակայն ինչպես ոչ կառավարական կազմակերպությունների կողմից այդ ոլորտի նկատմամբ

քաղաքացիական վերահսկողություն իրականացնելու ժամանակ, այնպես էլ իշխանության այս թևի գործառնության գնահատման համար էական դեր ունի այն՝ արդյո՞ք պետությունը իսկապես ժողովրդավարական է, թե՝ ոչ: Ավելին՝ ընտրությունների միջոցով խորհրդարանի ձևավորումը դեռևս չի խոսում ժողովրդավարական պետության մասին:

Հայտնի է, որ խորհրդարանը՝ որպես անկախ և հիմնական ներկայացուցչական մարմին, ինքնուրույն կանոնակարգում է սեփական գործառույթները: Ընդ որում՝ այդպիսի գործընթացը պայմանավորված է պատմական զարգացումներով դեռևս այն ժամանակներից, երբ խորհրդարանի գործունեության ժամանակի սահմանափակման համար պայքարում էր գործադիր իշխանությունը: Գործադիր իշխանության մարմնի համար պայքարի հիմնական նպատակն էր ազատվել պառլամենտական վերահսկողությունից և ձեռք բերել որոշակի օրենսդրական նախաձեռնության իրավունք (Shain 2015): Ընդհանուր առմամբ, դա միապետական իշխանության ձգտումն էր, որի արդյունքում պառլամենտն աշխատում էր նստաշրջանային կարգով, իսկ միջանկյալ փուլում գործադիր իշխանությանը վերապահված էր իրավասություն՝ ընդունելու ժամանակավոր օրենսդրական ակտեր (դեկրետներ, օրդոնանսներ):

Քաղաքացիական վերահսկողությունը, այսպիսով, այնքան էլ հեշտ իրականացվող գործընթաց չէ, քանզի ոչ բոլոր պետություններն ունեն ժողովրդավարության տարբեր մակարդակներ: Այն պետությունները, որոնք գտնվում են ժողովրդավարության հաստատման ճանապարհին, լրջորեն բախվում են նաև քաղաքացիական վերահսկողության արդյունավետության մակարդակի երաշխավորման հիմնախնդրին:

Քաղաքացիական վերահսկողության իրականացմանը նպաստելու գործում միջազգային կազմակերպությունների կողմից ընդունվել են մի շարք բանաձևեր: Հատկանշական է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից «Ժողովրդավարության աջակցումը և ամրապնդումը» բանաձևը 55/96 (2000), որտեղ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան կոչ է անում պետություններին աջակցել ժողովրդավարության հաստատմանը հետևյալ ուղղվածություններով՝ դատական համակարգի անկախություն և անկաշկանդվածություն, պետական ծառայողների, իրավապահ մարմինների աշխատակիցների և զինվորականների կրթության համակարգում մարդու իրավունքների երաշխավորում, ինչպես նաև ժողովրդավարությամբ ընտրված քաղաքացիական խորհրդարանի առջև անվտանգության համակարգի ու քաղաքականության հաշվետու լինելու ապահովման միջոցով (Nemetz and Ehm 4-5):

Եզրակացություն

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարող ենք փաստել, որ որքան պետությունը ժողովրդավարական է և զարգացած, այնքան բաց է իր քաղաքացիների համար: Այս համատեքստում էլ հենց անվտանգության ոլորտի նկատմամբ վերահսկողությունը համարվում է առաջնային, քանի որ պետության ամենակարևոր գործառույթը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովումն է: Եվ ահա առաջ է գալիս կարևոր խնդիր. հատկապես անվտանգության ոլորտում այն իրականացնելու դեպքում ամենաէականն այն է, որ այդ վերահսկողությունն ունենա ժողովրդավարության հաստատման միտում, ոչ թե որոշակի ուժերի կողմից տվյալ պետությունը անվտանգության բնագավառում խոցելի դարձնելու նպատակ:

Այսպիսով՝ քաղաքացիական վերահսկողությունը հիմնականում իրականացվում է ոչ կառավարական կազմակերպությունների կողմից: Արդյունքում վերոնշյալ խնդիրը հասկանալու համար կարևոր է բացահայտել այդ գործառնության անկախությունը և ինքնուրույնությունը, կազմակերպությունների ֆինանսավորման աղբյուրները և նրանց հետապնդող նպատակը:

Որպես ամփոփում՝ հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության հասարակական կյանքում իրականացվող բարեփոխումների ընթացքում արդիական խնդիրներ են անվտանգային համակարգի իրավաքաղաքական բարեփոխումները, որպեսզի դրանք ի վիճակի լինեն չեզոքացնելու երկրի անվտանգության դեմ ուղղված թե՛ ներքին, թե՛ արտաքին սպառնալիքները: Բնականաբար, պետության արդյունավետ անվտանգային համակարգի երաշխավորումը, որը կապահովի պետության և քաղաքացիների շահերի փոխադարձ ու հավասարակշռված իրականացումը, իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացման գործընթացի ամենաբարդ խնդիրներից է:

Առաջարկություններ

1. Բարձրացնել քաղաքացիական վերահսկողության և հաղորդակցության մոդելի արդյունավետությունը ՀՀ անվտանգային միջավայրի ապահովման ներքին և արտաքին ուղղություններում՝ հստակեցնելով ՀՀ ազգային անվտանգության հիմնական սպառնալիքներին ու մարտահրավերներին դիմագրավելու գործում քաղաքացիական վերահսկողության գործառույթները:
2. Հստակեցնել օրենսդրական բարեփոխումների գործընթացում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության ձևաչափերը և ընթացակարգը՝ բացառելով պետական մարմինների հայեցողությունը:
3. Գույքագրել ազգային անվտանգության բնագավառում գործող քաղաքացիական հասարակության մասնակիցներին և նրանց գործառույթները՝ վերջիններիս արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով:

Օգտագործված գրականություն

1. Արշակյան, Քրիստինե. *Մարքեթինգ և կառավարում*. Կրթության ազգային կենտրոնի հրատ., Երևան, 2014.
2. *Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն* (ընդ. 06.12.2015թ. առ 2020թ. հունիսի 22-ի փոփոխություններով)), https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510: Մուտք՝ 25.12.2024:
3. Հովհաննիսյան, Հովհաննես. *Քաղաքացիական հասարակություն: Քաղաքական ինստիտուտների և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը համակարգի ներդաշնակ զարգացման և անվտանգության տեսանկյունից*. «Նորավանք» հրատ., Երևան, 2003:
4. Հովհաննիսյան, Վոլոդյա, և ուրիշներ. *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն.* «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2005:
5. *«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք* (ընդ. 16.12.2016թ.), https://www.arlis. am/documentview.aspx?docid=123524: Մուտք՝ 25.12.2024:
6. Комарова, Валентина, и др. *Парламентский контроль в Российской федерации и в зарубежных странах: нормативное регулирование и практика реализации*. ООО «Директмедиа Паблишинг», Москва-Берлин, 2020.
7. Пишулин, Олег. «Цели, обьекты и субьекты общественного контроля». *Вестник КГУ им. Н.А.Некрасова*, №4, 2014, стр. 108-110.
8. Cole, Eden. *Public Oversight of the Security Sector: A Handbook for Civil*. UNDP pub., Bratislava, 2015.
9. Huntington, Samuel. *The Soldier and the State.* Belknap Press, Cambridge, 1957.

10. Johnson, Richard et al. *The Challenge of Direct Democracy*. McGill Queen's University Press, Montreal, 1996.

11. Nemetz, Paul и Fridjof Ehm. *Strengthening Democracy in Europe and its Resilience against Autocracy: Daring more Democracy and a European Democracy Charte*r. European Legal Studies, Belgium, 2019.

12. Núria, Saura-Freixes. *Human Rights Defenders and the Law. A Constitutional and International Legal Approach.* Routledge, New York, 2023.

13. Peters, Dirk et al. *The Parliamentary Control of European Security Policy*. Oslo: ARENA Centre for European Studies University of Oslo, 2008.

14. Shain, Berry. *The Declaration of Independence in Historical Context*. Yale, Yale University Press, 2015.

15. Williams, Mark. «What is Civil Control of the Military?». 22 April 2021, https://idsemergencymanagement.com/2021/04/22/what-is-civil-control-of-themilitary/. Accessed: 25 Dec. 2024.

WORKS CITED

1. Arshakyan, Qristine. *Marqet'ing ev kar'avarum.* Krt'ut'yan azgayin kentroni hrat., Erevan, [*Marketing and Management*. National Center for Education edition] 2014. (In Armenian)

2. Hayastani Hanrapetut'yan Sahmanadrut'yun(Y'ndunvel e' 06.12.2015 (Ar' 2020t'. hunisi 22-i p'op'oxut'yunnerov)) [The Constittution of the Republic of Armenia, adopted on 06.12.2015, amended on 22.06.2020], https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510, Accessed:25.12.2024. (In Armenian)

3. Hovhannisyan, Hovhannes. Qaghaqaciakan hasarakut'un: Qaghaqakan institutneri ev hasarakakan kazmakerpout'yunneri hamagorc'akcut'yuny' hamakargi nerdashnak zargacman ev anvtangut'yan tesankyunic [Civil Society: Cooperation between Political Institutions and Public Organizations from the Perspective of Harmonious Development and Security of the System]. Noravanq hrat., Erevan., 2003. (In Armenian).

4. Hovhannisyan, Volodyan, ev urishner. Mardu iravunqneri ev himnarar azatut'yunneri pashtpanut'yan masin 1950 t'. noyemberi 4-i konvenciayi ev dran kic ard'anagrut'yunneri meknabanut'yun [Commentary on the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms of November 4, 1950 and its Protocols. Tigran Mec edition]. Tigran Mec' hrat., Erevan. 2005. (In Armenian)

5. «Mardu iravunqneri pashtpani masin» HH sahmanadrakan o'renq (y'nd. 16.12.2016t'.) [Constitutional Law Of The Republic Of Armenia On The Human Rights Defender] https://www.arlis.am/documentview.aspx?docid=123524, Accessed: 25 Dec. 2024). (In Armenian)

6. Komarova, Valentina, i dr. Parlamentskij kontrol' v rossijskoj federacii i v zarubezhnyh stranah: normativnoe regulirovanie i praktika realizacii [Parliamentary Control in the Russian Federation and in Foreign Countries: Regulatory Framework and Implementation Practices. OOO "Directmedia edition"]. OOO "Direktmedia Pablishing", Moskva-Berlin. 2020. (In Russian)

7. Pishulin, Oleg. «Celi, ob'ekty i sub'ekty obshhestvennogo kontrolja»*estnik KGU im. N.A.Nekrasova*, ["Goals, Objects and Subjects of Public Control". *Bulletin of KSU named after N.A. Nekrasov*], 4, 2014, s. 108-110. 2014. (In Russian)

FEATURES OF CIVILCONTROL IN THE CONTEXT OF NATIONAL SECURITY

ANAHIT SHAHUMYAN
International Scientific and Educational Center of the National Academy of Sciences,
General Department, Chief Specialist;
National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of Philosophy, Sociology and Law
Department of Political Studies, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

The purpose of this scientific article is to identify the features and forms of civil control in the process of implementing state security.

Pursuing the above-mentioned goals, within the framework of the research presented in this scientific article, the author set the task of studying the directions of the implementation of democratic control, as well as parliamentary control, and the issues of their historical formation. Moreover, the author presented the control functions of the legislative body of the state, the Parliament (the National Assembly of the Republic of Armenia), which exert their unique influence on the formation and development of state security.

The methodological basis of this research is formed by both general and special methods of legal studies, which include historical, formal legal and legal methods of comparison.

As a result of the study, we can conclude that civilian control over state security has complex historical origins of formation and development. Moreover, the effectiveness of civilian control is significantly implemented by non-governmental organizations, leaving the question of who they are funded by and for what purposes relevant. At the same time, legal and political reforms in the Republic of Armenia aimed at solving existing problems in the field, continue to remain relevant.

Keywords: *civil control, state, security, parliament, international organizations, non-governmental organizations, human rights, civil society*.

ОСОБЕННОСТИ ГРАЖДАНСКОГО НАДЗОРА В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ ГОСУДАРСТВА

АНАИТ ШАУМЯН
главный специалист общего отдела Международного научно-образовательного центра Национальной академии наук Республики Армения,
соискатель отдела политологических исследований Института философии, социологии и права Национальной академии наук Республики Армения,
г. Ереван, Республика Армения

Целью данной научной статьи является выявление особенностей и форм проявления гражданского контроля в процессе реализации безопасности государства.

Преследуя вышеуказанные цели, в рамках исследования, представленного в данной научной статье, автор ставит задачу изучить направления осуществления демократического контроля, а также парламентского контроля, вопросы их исторического формирования. Более того, автор представил надзорные функции законодательного органа государства - парламента (Национального Собрания РА),

которые оказывают свое особое влияние на становление и развитие безопасности государства.

Методологическую основу настоящего исследования составляют как общие, так и специальные методы юридического знания, в том числе исторический, формально-юридический и сравнительно-правовой. В результате проведенного исследования можно сделать вывод о том, что гражданский надзор за безопасностью государства имеет сложные исторические основыстановления и развития. Более того, эффективность гражданского надзора явно обеспечивается неправительственными организациями, оставляя актуальным вопрос о том, кем и для каких целей они финансируются. В то же время продолжают оставаться актуальными правовые и политические реформы в Республике Армения, направленные на решение существующих проблем в данной сфере.

Ключевые слова: *гражданский надзор, государство, безопасность, парламент, международные организации, неправительственные организации, права человека, гражданское общество*.